Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի 2017թ.
օգոստոսի 17 թիվ 7 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«17» օգոստոս 2017թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

I.**Ընդհանուր դրույթներ**

1. Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) գիտահետազոտական գործունեության իրականացման միասնական հայեցակարգը հիմնված է ԳՊՀ կանոնադրության վրա և համապատասխանում է Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրին:
2. Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման միասնական հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) բխում է ԳՊՀ առաքելությունից:
3. Հայեցակարգը սահմանում է ԳՊՀ-ում գիտահետազոտական գործունեության իրականացման հիմնարար սկզբունքները, նպատակները, խնդիրները, ուղղություններն ու կառուցակարգերը:
4. Համալսարանի ամբիոնների գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունները կազմում են ԳՊՀ գիտահետազոտական գործունեության շրջանակը, որը հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից, հինգ տարի ժամկետով:

II.**Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման հիմնարար սկզբունքները, նպատակներն ու խնդիրները**

5. Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման հիմնարար սկզբունքներն են՝

1) դասախոսների, աշխատակիցների, ուսանողների գիտական-հետազոտական գործունեության ազատությունը, որը ներառում է իրենց հետաքրքրություններին և ստեղծագործական ունակություններին համապատասխան գիտահետազոտական թեմաներ ընտրելու, գիտահետազոտական աշխատանքի ձևերն ու մեթոդները որոշելու, գիտատեխնիկական, նորարարական գործունեությունն իրականացնելու եւ դրանց արդյունքները հրապարակելու ազատությունը,

2) դասախոսների, աշխատակիցների, ուսանողների գիտական-հետազոտական շարժունությունը,

3) Համալսարանի գիտահետազոտական քաղաքականության հրապարակայնությունը,

4) ՀՀ Գեղարքունիքի մարզի հիմնախնդիրների և զարգացման հիմնական ուղղությունների գիտական ուսումնասիրության խրախուսումը,

5) հասարակական և բնական գիտությունների արդի նվաճումների հաշվառումը:

6. Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման հիմնական նպատակներն են.

1) գիտության և կրթության ինտեգրումը, գիտահետազոտական գործունեության արդյունքների ներառումը բարձրագույն կրթական ծրագրերում,

2) հայագիտության զարգացումը, հայ ժողովրդի պատմության, լեզվի, մշակույթի գիտական ուսումնասիրությունը, պահպանումն ու տարածումը,

3) գիտական տեղեկատվության ազատ փոխանակման ապահովումը,

4) Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտների հետ ԳՊՀ ամբիոնների համագործակցության ապահովումը,

5) օտարերկրյա գիտական հաստատությունների հետ կապերի ստեղծումը, համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացումը,

6) հետազոտական հմտությունների տիրապետող, մրցունակ մասնագետների պատրաստումը:

7. Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման խնդիրներն են.

1) եվրոպական բարձրագույն կրթական և գիտահետազոտական տարածքի որակի չափանիշների հաշվառումը և ներդնումը,

2) դասախոսների և ուսանողների գիտահետազոտական կարողությունների շարունակական զարգացումը,

3) գիտահետազոտական գործունեության համար պատշաճ պայմանների ապահովումը,

4) Համալսարանի հնարավորություններին համապատասխան՝ գիտահետազոտական, նորարարական գործունեության ֆինանսավորումը,

5) գիտահետազոտական եւ նորարարական գործունեությունից ստացված արդյունքների առևտրայնացումը,

6) անհատ հետազոտողների, հետազոտական խմբերի մտավոր սեփականության իրավունքի, հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությունը:

III. Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման հիմնական ուղղություններն ու կառուցակարգերը

8. ԳՊՀ գիտահետազոտական գործունեության իրականացման հիմնական ուղղությունները որոշվում են՝ հաշվի առնելով.

1) Հայաստանի Հանրապետության, մասնավորապես՝ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններն ու դրանց գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը,
2) գիտության զարգացման միջազգային միտումները,
3) Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական ներուժը,
4) ԳՊՀ ռեսուրսները, նյութատեխնիկական և ֆինանսական հնարավորությունները:

9. ԳՊՀ-ում խրախուսվում են հիմնարար և կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանքները՝ հետևյալ գիտական ուղղություններով.

1) ֆիզիկամաթեմատիկական,
2) քիմիական,
3) կենսաբանական,
4) տեխնիկական,
5) էկոլոգիական,
6) գյուղատնտեսական,
7) պատմական,
8) տնտեսական,
9) փիլիսոփայական,
10) բանասիրական,
11) իրավաբանական,
12) մանկավարժական,
13) հոգեբանական,
14) սոցիոլոգիական և քաղաքական,
15) աշխարհագրական, երկրաբանական և երկրաբնապահպանական:

10. Համալսարանում իրականացվող հետազոտությունների գերակա ուղղությունները սահմանվում են երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ հետազոտական պլանների միջոցով, մասնագիտական ամբիոնների կողմից՝ ԳՊՀ գիտահետազոտական գործունեության շրջանակին համապատասխան:

11. ԳՊՀ-ում ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվում են գիտաժողովներ, որոնք ընթանում են լիագումար նիստերի և մասնագիտական բաժանմունքներում աշխատանքների միջոցով:

12. ԳՊՀ տարեկան գիտաժողովի այն զեկուցումները, որոնք երաշխավորվում են խմբագրական խորհրդի կողմից, սահմանված կարգով հրատարակվում են Համալսարանի գիտական հոդվածների ժողովածուի հերթական համարում:

13. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական խորհուրդը գործում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից սահմանված կարգով՝ ՀՀ օրենքներին, ԳՊՀ կանոնադրությանը և սույն Հայեցակարգին համապատասխան:

14. Համալսարանի գիտական խորհուրդը սահմանված կարգով պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ է շնորհում ԳՊՀ աշխատակիցներին, որոնք հաշվի են առնվում ԳՊՀ-ի կողմից՝ աշխատավարձերը հաշվարկելիս, նյութական և բարոյական խրախուսման միջոցների կիրառելիս:

15. Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում մասնագիտական ամբիոնները ներկայացնում են հաշվետվություններ կատարված հետազոտությունների, գիտական զեկուցումների, ստացած գիտական կոչումների վերաբերյալ, որոնք հրապարակվում են:

16. ԳՊՀ-ում գիտահետազոտական գործունեությունը կարող է ֆինանսավորվել հետևյալ միջոցներով.

1) Համալսարանի բյուջեի հաշվին,
2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից,
3) դրամաշնորհային ծրագրերի միջոցներից,
4) վճարովի փորձագիտական, կրթական և այլ ծառայություններից ստացված եկամուտներից,
5) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից,
6) գիտական արդյունքի իրացումից գոյացած միջոցներից,
7) ՀՀ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց նվիրատվություններից և նվիրաբերություններից,
8)օտարերկրյա քաղաքացիների, միջազգային կազմակերպությունների նվիրատվություններից և նվիրաբերություններից,
9) այլ պետություններից ստացված ֆինանսավորումից,
10) օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցներից:

17. Գիտահետազոտական գործունեության համար Համալսարանի բյուջեում նախատեսված ֆինանսական միջոցները հաստատվում են ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից:

18. Գիտահետազոտական գործունեության համար ԳՊՀ բյուջեից և արտաբյուջետային միջոցներից կատարված տարեկան ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը Համալսարանի ռեկտորը ներկայացնում է հոգաբարձուների խորհրդին՝ ընդհանուր ֆինանսական հաշվետվության հետ միասին:

19. ԳՊՀ գիտահետազոտական գործունեության տարեկան ծախսերի վերաբերյալ իրականացվում են համապատասխան վերլուծություններ, հրապարակվում են արդյունքները:

20. Գիտահետազոտական աշխատանքի իրականացման հնարավորությունների վերաբերյալ Համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում իրականացվում են հարցումներ, որոնց արդյունքները

վերլուծվում են, հրապարակվում, քննարկվում ԳՊՀ գիտական խորհրդում՝ բարելավման միջոցներ ձեռնարկելու նպատակով: